և անձնէր ղեկավարութեան տակ մի շարք մասնագէտներ*) կատարում էին նախապատրաստական աշխատանքներ. ուսումնասիրում էին Հայաստանի շինաածանիութիները, հաւաքում նախանիութ, պատրաստում վերաշինական ծրագրներ ու յատակագծեր: Ակադ. Թամանեանը կազմել էր Երևան քաղաքի բարեփոխուած նոր յատակագիծը,**) պատրաստել էր տիպար գիւղերի, դպրոցների, հիւանդանոցների, ժողովրդական տների, պետական և հասարակական շէնքերի յատակագծեր, որոնք բոլորն էլ հիմքում ունէին հայկական ազգային ոճը: Վարչութիւնը սկսել էր կառուցանել Երևանի մանրէաբանական հիմնարկութեան շէնքը, հիմնական վերանորոգութեան էր ենթարկել քաղաքային առաջին հիւանդանոցը, կազմակերպել էր դաշ այրելու գործարան, Անիի շրջանում ձեռնարկել էր յուշարձանների հաւաքման, ցուցակագրութեան և պահպանման գործին:

Նոյն խնամ. նախարարութեան կից գործում էր և Գլխաւոր Բժշկա—Առողջապահական վարչութիւնը խնամ. նախարարի օգնական բժ. Ց. Տէր-Միքայէլեանի գլխաւորութեամբ: 1919թ. սկզբին Հայաստանում կար միայն 9 հիւանդանոց 300 մահճակալով: Նոյն տարուայ վերջը արդէն գոյութիւն ունէր 30 հիւանդանոց 1,600 մահճակալով, 5 բժշկական, 5 բուժակի կայան: 1920թ. դրանց վրա աւելացան մի շարք ուրիշ նոր հիւանդանոցներ ու կայաններ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Զալալ-Օղլիում և այլն: Կային պետական դեղատներ, որտեղից դեղ էր տրւում չքաւորներին ձրի, իսկ աշխատաւորներին 50% զեղջով: Երևանում կար կենտրոնական դեղապահեստ: Մալարիայի դէմ պայքարելու նպատակով Երևանի, Իգդիրի, Էջմիածնի, Հրազդանի, Ղամարլուի շրջաններում գործում էին բժշկական թռուցիկ խմբեր և այցելու հիւանդանոցներ: Սկսուել էին ջրանցքային աշխատանքներ Ղամարլուի ճահիճների չորացման համար: Երևանում կազմուել էր յատուկ մի մարմին—«Տրոպիկ Հիւանդութիւնների Ցանձնաժողով»—որ ունէր տրոպիկական հիւանդանոց, կազմակերպեց «տրոպիկական ցուցահանդէս», հրատարակեց «Մալարիա» պարբերականը և նպատակ ունէր կուել մալարիայի դէմ: Յետագային այս «Ցանձնաժողովը» վերածուեց Տրոպիկական Ինստիտուտի:

Տնտեսական տեսակէտից կարևոր աշխատանք էր կատարում և Գիւղատնտեսական ու Պետական Գոյքերի Նախարարութեան մէջ: 1920 թուի ամառը վերջացան Ս. Զաւալիշինի ջրային ընդարձակ հետազօտութիւնները: Եւ սկսուեցին հանքային լայն հետազօտութիւններ նախարարութեան հանքային բաժնի պետ Ս. Թուրեանի ղեկավարութեամբ: Հրաւիրուեցին մի շարք հեղինակաւոր մասնագէտներ՝ ինժ. Կարապետեանը, ինժ. Ն. Տէր-Միքայէլեանը, ինժ. Մ. Տէր-Դաւթեանը և ուրիշներ, որոնցից կազմուած յանձնա-

*) Սրանց շարքին էր երիտասարդ երկրաբան Այվազեանը, որ Հայաստանի շինաածաքարերի լաւագոյն մասնագէտներից մէկն էր և որ այնպէս անժամանակ մեռաւ մօտ երկու տարի առաջ:

**) Այս յատակագիծը, Թաւրիզում կատարուած որոշ լրացումներով, յետագային ընդունուեց և այժմ անց է կացւում կեանքում: